Այլ հատիկավորներ Other cereals	1.9	7.1	2.9	<b>11.9</b>	7.9	0.4	0.5	0.9	0.1	0.0	2.1	<b>11.9</b>	72.2	2.9	7.8	25.8
Կարտոֆիլ Potatoes	210.8	437.2	10.6	<b>658.6</b>	179.6	108.5	30.2	82.1	15.5 <sup>2</sup>	0.0	242.7	<b>658.6</b>	101.1	64.8	177.6	133.2
Բանջարեղեն և բոստան Vegetables and melons	136.4	819.4	54.6	<b>1010.4</b>	542.0	110.0	125.4	0.9	85.0	0.0	147.1	<b>1010.4</b>	103.9	195.6	535.8	122.8
<i>որից / of which</i>																
Կաղամբ Cabbage	32.1	74.9	1.0	<b>108.0</b>	21.6	35.3	19.8	0.0	1.3	0.0	30.0	<b>108.0</b>	100.5	7.8	21.4	4.1
Ծաղկակաղամբ Cauliflower	4.3	16.5	0.8	<b>21.6</b>	7.8	3.9	2.9	0.0	2.3	0.0	4.7	<b>21.6</b>	110.0	2.8	7.7	0.7
Վարունգ Cucumber	4.6	43.2	4.0	<b>51.8</b>	37.4	1.0	1.8	0.0	7.1	0.0	4.5	<b>51.8</b>	107.7	13.5	37.0	6.3
Լոլիկ Tomato	22.0	183.7	20.2	<b>225.9</b>	143.1	6.2	4.3	0.0	46.4	0.0	25.9	<b>225.9</b>	116.6	51.6	141.5	25.5
Գազար Carrot	7.0	13.7	3.7	<b>24.4</b>	11.9	3.6	2.0	0.0	0.0	0.0	6.9	<b>24.4</b>	78.6	4.3	11.8	4.4
Գլուխ սոխ Onion	19.1	43.8	4.2	<b>67.1</b>	27.6	0.0	17.1	0.0	0.1	0.0	22.3	<b>67.1</b>	91.4	10.0	27.3	9.3
Սխտոր Garlic	3.8	8.6	0.4	<b>12.8</b>	5.9	0.0	2.7	0.8	0.1	0.0	3.3	<b>12.8</b>	96.6	2.1	5.8	7.6

<sup>1</sup> Առանց <<ՀՀ մաքսային օրենսգրքով>> թույլատրելի չափաքանակների հաշվառման:

The allowable amount by the "RA Customs Code" is not recorded.

<sup>2</sup> Սույն ցուցանիշը ներառում է նաև քաղաքացիների կողմից ավտոմոբիլային տրանսպորտով մաքսային ձևակերպումներ չպահանջող կարտոֆիլի արտահանման գնահատված ծավալները (գնահատականը վերաբերվում է միայն սահմանափակում կատարած փրատանի քաղաքացիներին):

This indicator also includes estimated volume of potato export not requiring custom clearance implemented by the citizens by road transport (the estimation concerns only to the citizens of Georgia crossed the border).

Աղյուսակ 3.28.-ի շարունակություն

Table 3.28. continuation

	Պահուստներ սկզբում Opening stocks	Արտադ- րություն Production	Ներմու- ծում <sup>1</sup> Import <sup>1</sup>	Ամբող- ջական առուցարկ Total supply	Սննդի օգտագոր- ծում Food consumption	Անասնա- կեր Feed use	Կորուստ- ներ Waste	Սերմա- ցու Seed	Արտահա- նում <sup>1</sup> Export <sup>1</sup>	Այլ օգտա- գործում Other uses	Պահուստ- ներ տարվա վերջում Closing stock	Օգտագոր- ծում Total utilization	Ինքնաբա- վության աստիճան, % Self-sufficiency ratio, %	Սպառումը մեկ շնչի հաշվով Per capita consumption		
														կգ/տարի kg/year	գր/օր gr/day	կկալ/օր kcal/day
Սմբուկ Eggplant	4.1	62.4	1.5	<b>68.0</b>	54.1	4.7	2.0	0.0	1.4	0.0	5.8	<b>68.0</b>	99.7	19.5	53.5	17.7
Տաքդեղ Pappper	5.0	54.9	1.1	<b>61.0</b>	45.4	4.2	4.7	0.0	1.1	0.0	5.6	<b>61.0</b>	100.0	16.4	44.9	12.1
Կանաչ դոռ Green peas	1.7	0.9	4.0	<b>6.6</b>	4.0	0.7	0.3	0.0	0.0	0.0	1.6	<b>6.6</b>	19.4	1.4	4.0	1.2
Կանաչ լոբի Green beans	0.7	18.4	0.3	<b>19.4</b>	16.7	0.0	1.0	0.1	0.3	0.0	1.3	<b>19.4</b>	99.7	6.0	16.5	4.9
Բոստանային մշակաբույսեր Melons	0.0	126.6	5.0	<b>131.6</b>	103.1	19.0	9.2	0.0	0.3	0.0	0.0	<b>131.6</b>	96.4	37.2	101.9	13.3
Միրգ և հատապտուղ (բացի խաղողից) Fruit and berry (except grapes)	38.6	274.3	103.7	<b>416.6</b>	261.8	0.0	18.2	0.0	98.6	0.0	38.0	<b>416.6</b>	98.2	94.5	258.8	122.2
<i>որից / of which</i>																
Խնձոր Apple	9.3	84.7	4.4	<b>98.4</b>	74.3	0.0	4.3	0.0	10.2	0.0	9.6	<b>98.4</b>	107.3	26.8	73.5	36.0
Տանձ Pear	1.1	13.7	0.4	<b>15.2</b>	12.5	0.0	1.1	0.0	0.4	0.0	1.2	<b>15.2</b>	100.6	4.5	12.4	6.9
Սերկևիլ Quince	0.2	1.6	0.1	<b>1.9</b>	1.5	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.2	<b>1.9</b>	97.1	0.5	1.5	0.5
Ծիրան Apricot	2.7	53.2	0.1	<b>56.0</b>	30.9	0.0	1.1	0.0	21.9	0.0	2.1	<b>56.0</b>	169.7	11.2	30.5	13.7
Դեղձ Peach	8.4	53.5	11.2	<b>73.1</b>	45.8	0.0	4.9	0.0	15.3	0.0	7.1	<b>73.1</b>	108.2	16.5	45.3	14.9
Կեռաս Sour cherry	0.8	10.9	0.4	<b>12.1</b>	5.4	0.0	0.2	0.0	5.8	0.0	0.7	<b>12.1</b>	196.5	1.9	5.3	2.5
Սալոր Plum	4.0	25.0	1.0	<b>30.0</b>	16.6	0.0	1.3	0.0	7.8	0.0	4.3	<b>30.0</b>	137.4	6.0	16.4	7.5
Բալ Cherry	0.2	2.7	0.1	<b>3.0</b>	1.4	0.0	0.0	0.0	1.5	0.0	0.1	<b>3.0</b>	210.1	0.5	1.4	0.6
Ընկույզ Nut	0.5	4.9	0.3	<b>5.7</b>	4.8	0.0	0.1	0.0	0.2	0.0	0.6	<b>5.7</b>	98.4	1.7	4.7	9.3
Տխիլ Hazelnut	0.1	0.4	0.8	<b>1.3</b>	0.4	0.0	0.0	0.0	0.8	0.0	0.1	<b>1.3</b>	98.1	0.1	0.4	0.8
Թուզ Fig	0.2	1.7	1.1	<b>3.0</b>	0.6	0.0	0.1	0.0	2.2	0.0	0.1	<b>3.0</b>	308.4	0.2	0.6	0.2

<sup>1</sup> Առանց <<ՀՀ մաքսային օրենսգրքով>> թույլատրելի չափաքանակների հաշվառման:

The allowable amount by the "RA Customs Code" is not recorded.

Աղյուսակ 3.28.-ի շարունակություն

Table 3.28. continuation

	Պահուստներ տարվա սկզբում Opening stocks	Արտադրություն Production	Ներմուծում <sup>1</sup> Import <sup>1</sup>	Ամբողջական առաջարկ Total supply	Սննդի օգտագործում Food consumption	Անասնակեր Feed use	Կորուստներ Waste	Սերմացու Seed	Արտահանում <sup>1</sup> Export <sup>1</sup>	Այլ օգտագործում Other uses	Պահուստներ տարվա վերջում Closing stock	Օգտագործում Total utilization	Ինքնաբավության աստիճան, % Self-sufficiency ratio, %	Սպառումը մեկ շնչի հաշվով Per capita consumption		
														կգ/տարի kg/year	գր/օր gr/day	կկալ/օր kcal/day
Հատապտուղներ Berry	3.8	14.6	13.2	31.6	17.9	0.0	1.8	0.0	8.0	0.0	3.9	31.6	73.4	6.5	17.7	10.3
Հատիկաբնոցներ մշակաբույսեր Leguminous crops	2.3	4.1	7.0	13.4	9.9	0.0	0.4	0.3	0.1	0.0	2.7	13.4	37.3	3.6	9.8	31.5
<i>որից / of which</i>																
Ոլոռ Peas	0.9	0.9	2.5	4.3	3.0	0.0	0.1	0.1	0.0	0.0	1.1	4.3	26.7	1.1	3.0	10.4
Լոբի Beans	0.9	2.8	0.5	4.2	2.9	0.0	0.1	0.2	0.0	0.0	1.0	4.2	85.9	1.0	2.9	8.8
Ոսպ Lentils	0.3	0.2	3.5	4.0	3.3	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.5	4.0	5.9	1.2	3.3	10.0
Միսեռ Chick-Peas	0.1	0.1	0.5	0.7	0.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.7	18.2	0.2	0.6	2.1
Բուսական յուղ Vegetable oil	3.9	0.3	31.4	35.6	30.8	0.0	0.5	0.0	0.0	0.0	4.3	35.6	0.9	11.1	30.5	269.2
Շաքար Sugar	31.6	28.8	50.7	111.1	75.0	0.0	1.7	0.0	3.8	0.0	30.6	111.1	38.0	27.1	74.1	129.8
Չու Eggs	0.3	41.5	0.1	41.9	39.1	0.0	1.0	1.1	0.3	0.0	0.4	41.9	100.3	14.1	38.7	20.5
Կաթ Milk	51.2	654.4	171.1	876.7	715.2	72.0	10.5	0.0	27.2	0.0	51.8	876.7	82.0	258.1	707.1	282.8
Տավարի միս Beef	0.4	68.6	10.4	79.4	77.4	0.0	1.1	0.0	0.5	0.0	0.4	79.4	87.3	27.9	76.5	137.7
Խոզի միս Pork	0.1	15.7	19.5	35.3	34.3	0.0	0.3	0.0	0.5	0.0	0.2	35.3	45.1	12.4	33.9	71.2
Ոչխարի և այծի միս Mutton and goat meat	0.1	10.8	0.0	10.9	10.6	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.1	10.9	100.4	3.8	10.5	16.8
Թռչնի միս Poultry	2.9	12.6	40.3	55.8	52.5	0.0	0.3	0.0	0.2	0.0	2.8	55.8	23.9	18.9	51.9	55.5
Չուկ Fish	2.6	19.1	4.8	26.5	12.2	0.0	1.1	0.0	11.0	0.0	2.2	26.5	148.4	4.4	12.1	11.5
Խաղող Grapes	4.1	283.2	4.4	291.7	12.5	0.0	12.7	0.0	25.5	235.0	6.0	291.7	108.0	4.5	12.4	8.3
<b>ԸՆԴԱՄԵՆԸ TOTAL</b>																<b>2787.9</b>

<sup>1</sup> Առանց <<ՀՀ մաքսային օրենսգրքով>> թույլատրելի չափաքանակների հաշվառման:  
The allowable amount by the "RA Customs Code" is not recorded.

## Պարենային հաշվեկշիռի մեթոդաբանություն

Պարենային հաշվեկշիռը (այսուհետ՝ հաշվեկշիռ) ագրեգացված և վերլուծական ցուցանիշների այնպիսի համակարգ է, որը ներկայացնում է երկրի պարենամթերքի հիմնական տեսակների ձևավորման աղբյուրների, առաջարկի և դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրված ժամանակահատվածի համար՝ տարեկան կտրվածքով: Հաշվեկշիռը ցույց է տալիս պարենամթերքի շարժն արտադրության պահից մինչև վերջնական օգտագործում: Այն հնարավորություն է ընձեռում գնահատել ներմուծման պահանջարկը, սահմանել պարենամթերքի օգտագործման մասնաբաժինը և կանխատեսել ապրանքների շուկաների զարգացման իրավիճակները:

Հաշվեկշիռն անհրաժեշտ է պարենային անվտանգության և ապահովության նկարագրության համար: Վերջինիս միջոցով որոշվում է պարենամթերքի հիմնական տեսակների ինքնաբավության մակարդակը և գնահատվում անբավարար սնուցման հետ կապված ռիսկերը:

Հաշվեկշիռը ներառում է առաջնային հումքի և համապատասխան գործակիցներով վերափոխված վերամշակված պարենամթերքի վերաբերյալ տվյալները:

Հաշվեկշիռը բաղկացած է «առաջարկ» և «օգտագործում» հատվածներից: Հաշվեկշիռը հիմնված է այն առանցքային սկզբունքի վրա, որ «առաջարկում» և «օգտագործման» կազմերում ներառվող բոլոր բաղկացուցիչների հանրագումարները պետք է հավասար լինեն: Ըստ այդմ.

$$\begin{aligned} & \text{Առաջարկ (Պահուստներ տարվա սկզբում + Արտադրություն + Ներմուծում)} = \\ & \text{Օգտագործում (Սննդամթերքի օգտագործում + Անասնակեր + Կորուստներ + Սերմացու +} \\ & \text{Արտահանում + Այլ օգտագործում + Պահուստներ տարվա վերջում)} \end{aligned}$$

### Պարենային հաշվեկշիռի հատվածները

#### Առաջարկ

Սույն հատվածը ներառում է հետևյալ հիմնական ցուցանիշները՝ տրված ժամանակահատվածի կտրվածքով՝ *պարենամթերքի պահուստները տարվա սկզբում, դրանց արտադրության և ներմուծման ծավալները*:

Այսպես, *պահուստները* որոշակի պահի դրությամբ (տարվա սկզբում կամ վերջում) պարենամթերքի առաջարկի բոլոր ուղղություններով օգտագործումից հետո մնացած ռեսուրսներն են:

*Արտադրության* ցուցանիշը վերաբերում է ինչպես արտադրական, այնպես էլ տնային տնտեսություններում (տնայնագործական եղանակով) պարենամթերքի արտադրության ծավալներին:

*Ներմուծման* ցուցանիշը ներառում է արտասահմանյան ծագում ունեցող պարենամթերքների ներմուծման ծավալները՝ երկրի ներսում սպառման, ինչպես նաև վերաարտահանման համար:

#### Ներմուծումից կախվածության աստիճան

Ցուցանիշը ցույց է տալիս տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման մակարդակը ներմուծման հաշվին, որը հաշվարկվում է տոկոսներով՝ հետևյալ բանաձևով.

$$\text{(Ներմուծում / Արտադրություն + Ներմուծում - Արտահանում)}$$

#### Օգտագործում

Սույն հատվածը ներառում է հետևյալ հիմնական ցուցանիշները՝ *սննդամթերքի օգտագործում, անասնակեր, կորուստներ, սերմացու, արտահանում, օգտագործման այլ ուղղություններ և պահուստներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում*:

*Սննդամթերքի օգտագործումը* ցույց է տալիս հաշվետու ժամանակաշրջանում կենսաբանական և սոցիալական պայմաններին համապատասխան բնակչության կողմից անձնական սպառմանն ուղղված պարենամթերքի քանակը, որը հաշվարկվում է որպես առաջարկի և պարենամթերքի օգտագործման մյուս բոլոր ուղղությունների տարբերություն:

*Անասնակերը* պարենամթերքի այն ծավալն է, որն օգտագործվում է կենդանիների և թռչունների կերակրելու նպատակով՝ անկախ այն հանգամանքից՝ արտադրված է երկրի ներսում, թե ներմուծված է:

*Կորուստները* բեռնափոխադրման և պահպանման բոլոր փուլերում՝ արտադրությունից

մինչև սպառում, չօգտագործված պարենամթերքի ծավալն է: Կորուստների առաջացման հիմնական պատճառը իրացման և պահպանման ոչ լիարժեք համակարգերի առկայությունն է: Կորուստներ հատվածում չեն ներառվում արտադրության տարբեր փուլերում դրա անհրաժեշտ մաս հանդիսացող անխուսափելի կորուստները, օրինակ՝ ցորենի աղալու, չորացման գործընթացներում, դաշտում տեղափոխման և պահեստավորման հետ կապված կորուստները, ինչպես նաև տնային տնտեսություններում առկա սննդի ու վերամշակման ընթացքում առաջացող այլ կորուստները: Կորուստները հաշվարկվում են Պարենամթերքի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջարկած գործակիցներով, որոնք պայմանավորված որոշակի հանգամանքներով, կարող են ճշգրտվել:

*Սերմացուն* պարենամթերքի այն ծավալն է, որն օգտագործվում է վերարտադրության նպատակով բոլոր ցանքերի, այդ թվում՝ կրկնակի ժամանակ: Այն ներառում է սերմացուն՝ ցանքի, բույսերը՝ փոխպատվաստելու, ձվերը՝ ձվադրելու համար և այլն:

*Արտահանումը* ներառում է տեղական արտադրության պարենամթերքի արտահանման, ինչպես նաև արտասահմանյան ծագում ունեցող պարենամթերքների վերարտահանման ծավալները:

*Այլ օգտագործումը* արտահայտում է պարենամթերքի այն ծավալը, որն օգտագործվում է ոչ պարենային ապրանքների արտադրության նպատակով, օրինակ՝ բժշկական (էթիլային) սպիրտի արտադրության նպատակով ցորենի օգտագործումը, խաղողի օգտագործումը գինու արտադրության համար:

#### **Ինքնարավոյության աստիճան**

Ցուցանիշը ցույց է տալիս երկրի տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին, որը հաշվարկվում է տոկոսներով հետևյալ բանաձևով.

$$\text{Արտադրություն} / (\text{Արտադրություն} + \text{Ներմուծում} - \text{Արտահանում})$$

#### **Հաշվեկշռի կազմման համար օգտագործվող ապրանքախմբերը**

Հաշվեկշռում ընդգրկվող ապրանքախմբերի կազմը պայմանավորված է երկրում առավել լայն սպառում ունեցող ապրանքատեսակներով: Ըստ այդմ, յուրաքանչյուր տարի հաշվեկշիռ է կազմվում հետևյալ 21 ապրանքախմբերի համար՝ *ցորեն, տարեկան, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ, այլ հատիկավորներ, կարտոֆիլ, բանջարեղեն, միրգ (բացի խաղողից), հատիկաընդդեմային մշակաբույսեր, բուսական յուղ, շաքար, ձու, կաթ, տավարի, խոզի, ոչխարի և այծի, թռչնի միս, ձուկ, խաղող*: Մասնավորապես.

- *ցորենը* ներառում է ցորենի, ինչպես նաև ցորենի այլուրի, մակարոնեղենի, էթիլային սպիրտի, թխվածքաբլիթների, հացի և այլ հացամթերքի, օդու տվյալները՝ վերածած ցորենի,
- *տարեկանը* ներառում է տարեկանի, ինչպես նաև տարեկանի այլուրի, հատիկների, տարեկանի ձավարի, փաթիլների տվյալները՝ վերածած տարեկանի,
- *գարին* ներառում է գարու, ինչպես նաև գարու այլուրի, հատիկների, գարեձավարի, փաթիլների, գարու ածիկի, գարեջրի և այլ վերամշակված գարու տվյալները՝ վերածած գարու,
- *վարսակը* ներառում է վարսակի, ինչպես նաև վարսակի այլուրի, հատիկների, վարսակի ձավարի, փաթիլների և այլ վերամշակված վարսակի տվյալները՝ վերածած վարսակի,
- *եգիպտացորենը* ներառում է եգիպտացորենի, ինչպես նաև եգիպտացորենի այլուրի, հատիկների, փաթիլների և եգիպտացորենի օսլայի տվյալները՝ վերածած եգիպտացորենի,
- *բրինձը* ներառում է բրնձի, ինչպես նաև բրնձի այլուրի տվյալները՝ վերածած բրնձի,
- *այլ հատիկավորները* ներառում է սորգոյի, հնդկացորենի, ինչպես նաև այլ հատիկավորների այլուրի, հատիկների, փաթիլների, սաղմի, օսլայի տվյալները՝ վերածած այլ հատիկավորների,
- *կարտոֆիլը* ներառում է կարտոֆիլի, ինչպես նաև կարտոֆիլի օսլայի, սառեցված կարտոֆիլի և չիպսի տվյալները՝ վերածած կարտոֆիլի,
- *բանջարեղենը և բոստանը* ներառում է թարմ, ինչպես նաև չորացված և պահածոյացված բանջարեղենի (կաղամբ բոլոր տեսակի, վարունգ, լոլիկ, սեղանի ճակնդեղ, գլուխ սոխ, սխտոր և այլն), տոմատի հյութի տվյալները՝ վերածած թարմ բանջարեղենի,
- *միրգը և հատապտուղը* ներառում է թարմ, ինչպես նաև չորացրած և պահածոյացված մրգի (հնդավորներ, կորիզավորներ, ընկուզապտուղներ, մերձարևադարձային, ցիտրուսներ և այլն), մրգահյութերի, չորացրած հատապտուղների տվյալները՝ վերածած թարմ մրգի և հատապտուղի,
- *ձուն* ներառում է կճեպով ձվի, ինչպես նաև ձվի փոշու տվյալները՝ վերածած ձվի,



- *կաթը* ներառում է թարմ կաթի, ինչպես նաև կարագի, կաթի փոշու, մածունի, թթվասերի, կաթնաշոռի, պանրի, պաղպաղակի և այլ կաթնամթերքի տվյալները՝ վերածած թարմ կաթի,
- *տավարի միսը* ներառում է սպանդային քաշով տավարի մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները՝ վերածած սպանդային քաշով տավարի մսի,
- *խոզի միսը* ներառում է սպանդային քաշով խոզի մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները՝ վերածած սպանդային քաշով խոզի մսի,
- *ոչխարի և այծի միսը* ներառում է սպանդային քաշով ոչխարի և այծի մսի, ինչպես նաև պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները՝ վերածած սպանդային քաշով ոչխարի և այծի մսի,
- *թռչնի միսը* ներառում է սպանդային քաշով թռչնի մսի (հավերի, աքլորների, հնդկահավերի, բադերի, սագերի ու այլ ընտանի թռչունների), ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները՝ վերածած սպանդային քաշով թռչնի մսի,
- *ձուկը* ներառում է կենդանի ձկան, ինչպես նաև թարմ, սառեցված, չորացված, ծխեխաշած, ապխտած, պահածոյացված ձկան, խեցգետնակերպերի, կակղամորթների, այլ ձկնամթերքների, ձկան խավիարի տվյալները՝ վերածած ձկան,
- *խաղողը* ներառում է խաղողի, ինչպես նաև չամիչի տվյալները՝ վերածած խաղողի,
- *հատիկաընդեղենային մշակաբույսերը և բուսական յուղը* ներառում է համապատասխանաբար լոբու, ոսպի և այլ լոբազգիների, ինչպես նաև սոյայի, գետնընկույզի, ձիթապտղի, արմավենու, արևածաղկի և այլ ձեթերի վերաբերյալ տվյալները:

## Food balance sheet methodology

Food balance sheet (hereinafter “the balance sheet”) is a system of aggregated and analytical indicators, which represents comprehensive information on forming sources of country’s main foodstuff, their supply and directions of their use for a specified period of time on an annual basis. The balance sheet shows movement of foodstuff from production to final consumption. It gives an opportunity to assess import demand, determine share of food consumption and predict markets’ development situations.

The balance sheet is necessary for description of food safety and security. By the latter self-sufficiency level of main foodstuff is determined and risks associated with insufficient nutrition are assessed.

The balance sheet includes data on raw materials and foodstuff processed with appropriate coefficients.

The balance sheet consists of “supply” and “utilization” components. The key principle for the balance sheet is equality of sums of all elements of “supply” and “utilization” parts. Thus.

$$\text{Supply (Opening stocks + Production + Import) = Utilization (Food utilization + Feed + Losses + Seed + Export + Other utilization + Closing stocks)}$$

### Components of the balance sheet

#### **Supply**

This component includes the following key indicators for the given period of time: *food stocks at the beginning of the year (opening stocks), their production and import volume.*

Thus, *stocks* are the resources remaining after food supply’s use in all directions at a certain point of time (either at the beginning or at the end of the year).

*Production* indicator refers to volume of food produced both during production process and in households (home-made production).

*Import* indicator includes the volume of foreign origin food imports for the aim of consumption within the country, as well as for re-export.

#### **Import dependency ratio**

The indicator shows the level of satisfaction of given product’s demand at the expense of import, which is calculated by the following formula in percentages:

$$(Import / Production + Import - Export)$$

#### **Utilization**

This component includes the following main indicators: *food consumption, feed, losses, seed, export, other utilization and stocks at the end of the reporting period.*

*Food consumption* shows the amount of food consumed by the population in accordance with the biological and social conditions of the population for the reporting period, which is calculated as a difference between supply and all other areas of food utilization.

*Feed* is the volume of the food used as animal and poultry feed regardless of the circumstance it is produced in the country or is imported.

*Losses* are the unused volume of foodstuff in all phases of transportation and storage: from production to consumption. The main reason for losses is availability of not proper system of realization and storage. Unavoidable losses occurring as a necessary part during different phases of production, e.g. losses during wheat grinding and drying, transferring in field and storing, food losses existing in households and other losses incurred during processing, are not included in losses component. Losses are calculated by the coefficients proposed by the Food and Agriculture Organization (FAO), which, depending on certain circumstances, can be adjusted.

*Seed* is the volume of food used for reproduction during all sowings, including double. It includes seeds for sowing, plants for transplanting, eggs for laying eggs, etc.

*Export* includes the volume of locally produced foodstuff’s export, as well as the re-export of foreign origin foodstuff.

*Other utilization* expresses the volume of food used for the production of non-food products, e.g. the use of wheat for medical (ethyl) alcohol production, the use of grapes for wine production.

### **Self-sufficiency ratio**

The indicator shows the degree of country's demand satisfaction regarding a certain product at the expense of its own means, which is calculated by the following formula in percentages:

$$\text{Production} / (\text{Production} + \text{Import} - \text{Export})$$

### **Commodity coverage used for the compilation of the balance sheet**

The list of commodity group included in the food balance sheet is conditioned by wider consumption of commodities in the country. Thus, every year the food balance sheet is compiled for the following 21 commodity groups: *wheat, rye, barley, oats, maize, rice, other cereals, potatoes, vegetables, fruits (except grapes), leguminous crops, vegetable oil, sugar, egg, milk, beef, pork, mutton and goat meat, poultry, fish and grapes*. Particularly:

- *wheat* includes data on wheat, as well as on wheat flour, macaroni, ethyl alcohol, pastry, bread and other bakery goods, data on vodka converted to wheat,
- *rye* includes data on rye, as well as on rye flour, cereals and flakes converted to rye,
- *barley* includes data on barley, as well as on barley flour, cereals, flakes, barley malt, beer and other processed barley converted to barley,
- *oat* includes data on oats, as well as on oats flour, cereals, flakes and other processed oats converted to oats,
- *maize* includes data on maize, as well as on maize flour, cereals, flakes, other processed maize and starch of maize converted to maize,
- *rice* includes data on rice, as well as on rice flour converted to rice,
- *other cereals* includes data on sorghum, buckwheat and other cereals, as well as on these cereals' flour, flakes, processed cereals and starch of other cereals converted to other cereals,
- *potato* includes data on potato, as well as on potato starch, frozen potato and chips converted to potato,
- *vegetable and melon* includes data on fresh, as well as on dry and canned vegetables (cabbage of all types, cucumber, tomatoes, beet, bulb onion, garlic, etc.), tomato juice converted to vegetables,
- *fruit and berry* includes data on fresh, as well as on dry and canned fruit (drupaceous, stone-fruit, nuts, subtropical, citrus, etc.), fruit juice, dry berry converted to fruit,
- *eggs* includes data on eggs in shells, as well as on egg powder converted to eggs,
- *milk* includes data on fresh milk, as well as on butter, milk powder, matsun, sour cream, cottage cheese, cheese, ice-cream and other milk products converted to fresh milk,
- *beef* includes data on slaughter weight of meat, as well as on sausages, canned meat and other meat products converted to meat in slaughter weight,
- *pork* includes data on slaughter weight of meat, as well as on sausages, canned meat and other meat products converted to pork in slaughter weight,
- *mutton and goat meat* includes data on slaughter weight of meat, as well as on canned meat and other meat products converted to mutton and goat in slaughter weight,
- *poultry* includes data on slaughter weight of meat, as well as on sausages, canned meat and other meat products converted to poultry in slaughter weight,
- *fish* includes data on fresh, as well as on frozen, dried, salted, smoked, canned, prepared and preserved fish, crustaceans, mollusks and other fish products, stock fish, caviar converted to fish,
- *grape* includes data on grapes, as well as on raisins converted to grapes,
- *leguminous crops and vegetable oil* includes correspondingly data on beans, lentils, other beans and soy, peanut, olives, palm, sunflower seed, other oil.

2021թ. II եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կենդանական ծագման գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալները, բացառությամբ կաթի, նվազել են (Աղյուսակ 3.22.): Այսպես, 2021թ. II եռամսյակում կենդանի քաշով մսի արտադրության ծավալը նվազել է 5.2%-ով և կազմել 22.0 հազ. տոննա, ձվինը՝ 4.8%-ով և կազմել 306.0 մլն. հատ: Փոխարենը 3.0%-ով աճել է կաթի արտադրության ծավալը և կազմել 246.4 հազ. տոննա:

Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված բեռնամաքսային հայտարարագրերի, ինչպես նաև քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի և ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձևի տվյալների, 2021թ. II եռամսյակում հանրապետություն ներմուծված ապրանքների 17.7%-ը բաժին է ընկել պարենամթերքին (2020թ. II եռամսյակում՝ 20.6%), իսկ արտահանման ծավալներում՝ 28.4%-ը (2020թ. II եռամսյակում՝ 30.8%) (Աղյուսակ 1.1.): Հաշվետու ժամանակաշրջանում պարենամթերքի արտաքին առևտրաշրջանառության ծավալն ընթացիկ գներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել է 19.9%-ով և կազմել 450.0 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում՝ պարենամթերքի ներմուծումը՝ 222.2 մլն. ԱՄՆ դոլար (ՄԻՖ գներով) և արտահանումը՝ 227.8 մլն. ԱՄՆ դոլար (ՖՕԲ գներով):

2021թ. II եռամսյակում նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ հիմնական պարենային ապրանքատեսակներից շաքարի ներմուծման ծավալը նվազել է 67.2%-ով և կազմել 5.2 հազ. տոննա, կաթինը՝ 38.3%-ով և կազմել 1.6 հազ. տոննա, բրնձինը՝ 32.1%-ով և կազմել 2.4 հազ. տոննա, կարագինը՝ 31.4%-ով և կազմել 0.8 հազ. տոննա, մակարոնեղենինը՝ 28.3%-ով և կազմել 3.0 հազ. տոննա, բանջարեղենինը՝ 14.6%-ով և կազմել 9.3 հազ. տոննա, տավարի մսինը՝ 9.2%-ով և կազմել 0.6 հազ. տոննա: Փոխարենն ավելացել են ձվի (39.7 անգամ), պանրի (64.5%-ով), թռչնի մսի (51.6%-ով), խոզի մսի (50.4%-ով), ցորենի (39.8%-ով), մրգի (16.9%-ով), բուսական յուղի (3.2%-ով) ներմուծման ծավալները, իսկ այլուրիները մնացել է անփոփոխ (Աղյուսակ 3.23.):

Պարենամթերքի արտահանման ծավալներում գերակշռել է միրգ ապրանքախումբը: Այսպես, 2021թ. II եռամսյակում արտահանվել է 28.8 հազ. տոննա միրգ, ինչը 2.0 անգամ ավել է 2020թ.-ի համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշից: Պարենամթերքի արտահանման ծավալներում ավելացել են նաև գինու (1.9 անգամ), հանքային ջրի (57.5%-ով), պանրի (48.2%-ով), կոնյակի (45.1%-ով) արտահանման ծավալները (Աղյուսակ 3.24.):

Ըստ ազգային պարենային հաշվեկշռի, միջինը մեկ շնչի հաշվով 21 ապրանքախմբի (ըստ ապրանքատեսակների՝ 46) պարենի օրական էներգետիկ առաջարկը 2020թ. կազմել է 2 787.9 կկալ՝ 2019թ. 2 777.3 -ի դիմաց (Աղյուսակներ 3.27 և 3.28.):

Երկրում պարենային ապահովության իրավիճակի գնահատման ընթացքում կարևորվում է նաև բնակչության կողմից սպառվող սննդի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքների ինքնաբավությունը: Որքան բարձր է ինքնաբավության աստիճանն, այնքան ավելի ինքնաբավ է երկիրը և պահանջարկը բավարարվում է սեփական միջոցների հաշվին:

Այսպես, 2020թ. ցորենի ինքնաբավության աստիճանը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 24.4%, ինչը հիմնականում պայմանավորված է ցորենի արտադրության ծավալի նվազմամբ: Նվազել են նաև շաքար, ոչխարի և այծի միս, խոզի միս, միրգ և հատապտուղ, տավարի միս, կաթ, տարեկան, հատիկալնդեղենային մշակաբույսեր, բուսական յուղ ապրանքախմբերի ինքնաբավության աստիճանները (համապատասխանաբար 35.0, 13.4, 10.4, 5.8, 3.1, 2.3, 1.5, 0.9, 0.6 տոկոսային կետերով):

Փոխարենն աճել են ձուկ, այլ հատիկավորներ, խաղող, վարսակ, գարի, թռչնի միս, եգիպտացորեն, բանջարեղեն և բոստան, ձու ապրանքախմբերի ինքնաբավության աստիճանները (համապատասխանաբար՝ 35.3, 8.8, 4.4, 4.4, 4.1, 2.2, 1.5, 1.5 և 0.3 տոկոսային կետերով): Կարտոֆիլի ինքնաբավության աստիճանը մնացել է անփոփոխ: Հարկ է նաև նշել, որ ձուկ, խաղող, բանջարեղեն և բոստան, կարտոֆիլ, ոչխարի և այծի միս, ձու, միրգ և հատապտուղ, տավարի միս ապրանքախմբերի ինքնաբավության աստիճանները բավականին բարձր են և կազմել են համապատասխանաբար 148.4%, 108.0%, 103.9%, 101.1%, 100.4%, 100.3%, 98.2%, 87.3% (Աղյուսակ 3.28.):

*2020թ. հանրապետության ոռոգելի հողատարածքներում գերիտնավ հողերի մակերեսը միջին վեգետացիոն շրջանում (ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի տվյալների) կազմել է 11.2 հազ. հա, այդ թվում՝ Արարատյան հարթավայրում՝ 10.3 հազ. հա:*

In the II quarter of 2021 compared to the same period of the previous year the volume of production of agricultural products of animal origin decreased except milk (Table 3.22.). Thus in the II quarter of 2021 the volume of meat in live weight production decreased by 5.2% and comprised 22.0 thousand tons, eggs – by 4.8% and comprised 306.0 million pieces. Instead of that the volume of milk production increased by 3.0% and comprised 246.4 thousand tons.

By the customs declarations and the citizens' (shuttle) trade data, as well as the statistical data form on the accounting of goods transportation received by the State Revenue Committee of the RA, in the II quarter of 2021 17.7% of goods imported to the republic fell into food products (in the II quarter of 2020 – 20.6%) and that in export volume – 28.4% (in the II quarter of 2020 – 30.8%) (Table 1.1.). In the reporting period the volume of foreign trade turnover of food products at current prices compared to the same period of the previous year increased by 19.9% and comprised 450.0 million US dollars, including import of food product – 222.2 million US dollars (in CIF prices) and export – 227.8 million US dollars (in FOB prices).

In the II quarter of 2021 compared to the same period of the previous year among the main food products the import volume of sugar decreased by 67.2% and comprised 5.2 thousand tons, milk – by 38.3% and comprised 1.6 thousand tons, rice – by 32.1% and comprised 2.4 thousand tons, butter – by 31.4% and comprised 0.8 thousand tons, macaroni – by 28.3% and comprised 3.0 thousand tons, vegetable – by 14.6% and comprised 9.3 thousand tons, beef – by 9.2% and comprised 0.6 thousand tons. Instead, the import volume of egg increased 39.7 times, cheese – by 64.5%, poultry – by 51.6%, pork – by 50.4%, wheat – by 39.8%, fruit – by 16.9%, vegetable oil – by 3.2% and the import volume of flour remained unchanged (Table 3.23.).

Fruit commodity group prevailed in the volume of food product export. Thus, in the II quarter of 2021 28.8 thousand tons of fruit was exported which is more than the same indicator of the same period of 2020 2.0 times. The export volume of wine also increased 1.9 times, mineral water – by 57.5%, cheese – by 48.2%, cognac – by 45.1% (Table 3.24.).

According to the National Food Balance daily energy supply of the commodity groups 21 (according to 46 food products) was 2 787.9 kilocalories in average per capita in 2020 compared to 2 777.3 kilocalories in 2019 (Tables 3.27. and 3.28.).

In assessing the food security situation in the country, the self-sufficiency of products with larger share in the structure of food consumed by the population is important as well. The higher the ratio of self-sufficiency, the more self-sufficient is the country and the demand is satisfied at its own expense.

Thus, in 2020 the self-sufficiency ratio of wheat decreased by 1.5 percentage point compared to the previous year and comprised 24.4%, which is stipulated by the decreasing of wheat production volume. The self-sufficiency ratios of sugar, mutton and goat meat, pork, fruit and berry, beef, milk, rye, leguminous crops, vegetable oil commodity groups also decreased by 35.0, 13.4, 10.4, 5.8, 3.1, 2.3, 1.5, 0.9, 0.6 percentage points correspondingly. Instead the self-sufficiency ratios of fish, other cereals, grapes, oats, barley, poultry, maize, vegetables and melons, eggs commodity groups increased by 35.3, 8.8, 4.4, 4.4, 4.1, 2.2, 1.5, 1.5 and 0.3 percentage points correspondingly. The self-sufficiency ratio of potatoe remained unchanged.

It must be pointed, that the self-sufficiency ratio of fish, grapes, vegetables and melons, potato, mutton and goat meat, eggs, fruit and berry, beef commodity groups was quite high and comprised 148.4%, 108.0%, 103.9%, 101.1%, 100.4%, 100.3%, 98.2%, 87.3% correspondingly (Table 3.28).

*In 2020 the area with higher dampness in average vegetative period (according to the data of Water Committee of the RA Ministry of Territorial Administration and Infrastructure) in irrigated lands of Republic comprised 11.2 thousand hectare, including 10.3 thousand hectare in Ararat valley.*